



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
Հ Ր Ա Մ Ա Ն

« 22 » սեպտեմբերի 2010թ.

N 2204-Կ

Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում  
հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելված 2-ի 8-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգում.

- 1) «Դուրս գրված (զնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ» տեղեկանքի ձևաչափը՝ համաձայն N1 հավելվածի
- 2) «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին» տեղեկության ձևաչափը՝ համաձայն N2 հավելվածի
- 3) «Հաշվապահական հաշվեկշիռ (Ձև N1)» հաշվետվության ձևաչափը՝ համաձայն N3 հավելվածի
- 4) «Ֆինանսական արդյունքների մասին (Ձև N2)» հաշվետվության ձևաչափը՝ համաձայն N4 հավելվածի
- 5) «Տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների՝ սեփականատերերի կողմից կատարված բնապահպանական վճարների մասին» տեղեկանքի ձևաչափը՝ համաձայն N5 հավելվածի
- 6) «Պարզեցված հաշվարկ՝ շահութահարկի» հաշվետվության ձևաչափը՝ համաձայն N6 հավելվածի:

2. Սահմանել, որ հարկ վճարողները հաշվապահական ծրագրերից գեներացված կամ ցանկացած այլ էլեկտրոնային եղանակով կազմված և սույն հրամանի 1-ին կետով հաստատված ձևաչափերին համապատասխանող հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնելու համար կարող են էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի միջոցով մուտք գործել հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի էլեկտրոնային հաշվետվություններին վերաբերող բաժնի հարկ վճարողի դարան, ընտրել և բացել սույն հրամանի 1-ին կետով հաստատված հաշվետվություններից որևէ մեկը, համապատասխան ստեղծի օգնությամբ բեռնել ընտրված հաշվետվության ձևաչափին համապատասխան կազմված հաշվետվությունը, այնուհետև հիշել, անհրաժեշտության դեպքում խմբագրել, գրանցել, ստորագրել և ուղարկել հաշվետվությունը հարկային մարմին: Հաշվետվության ներկայացումը հավաստվում է օրենքով սահմանված կարգով համակարգի կողմից հարկ վճարողին ուղարկված ծանուցմամբ:
3. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության պետ Ս. Փաշայանին՝ սույն հրամանի 2-րդ կետով սահմանված կարգին համապատասխան ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված ձևաչափերի ներդրումը և գործարկումը հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգում:
4. ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մանուչարյանին՝ ապահովել զանգվածային լրատվական միջոցներով սույն հրամանի ընդունման մասին հանրության իրազեկումը և սույն հրամանի ամբողջական տեղադրումը ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում:
5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.04.2010թ. «էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հարկ վճարողների կողմից «Ղուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ» տեղեկանքի ձևաչափը հաստատելու մասին» N 678-Ա հրամանը:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ